24811

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊՐՈՖՄԻՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏԿՈՄ

ГОСБИБЛИО ... ССР
Инв. № 3194

# Տ[illegible]-Ի ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊՐՈՖՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՊՐՈՖՕՐԳԱՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵՎ

# ՀԱՄԿԽ-Ի ՀՐԱՀԱՆԳԸ

## ՊՐՈՖՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԼՈՒՍՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ 1940

25 FEB 2013

15 JAN 2010

ОБЯЗАТЕЛЬНЫЙ ЭКЗЕМПЛЯР

331.88

# ՏԱՐՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ 1940 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ՆԻՍՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ

## *ՀԱՄԿԽ-Ի ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ «ՖԱԲՐԻԿԱ-ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

*ՀԱՄԿԽ-ի Նախագահության որոշման համաձայն ս. թ. հոկտեմբեր—նոյեմբեր ամիսների ընթացքում անցկացնել միության բոլոր ստորին օրգանների տեղկոմների պրոֆկազմակերպիչների և խմբկոմների հաշվետվություններ և ընտրություններ։*

*Պրոֆօրգանների հաշվետվություններն ու ընտրությունները անցկացնել «...պրոֆմիության անդամների լայն մասսաները մոբիլիզացիայի ենթարկելու Սովետական Միության տնտեսական և պաշտպանական հզորության հետագա ամրապնդման, սոցիալիստական մրցման և ստախանովյան շարժման ծավալման, աշխատանքի արտադրողականության հետագա աճման և սոցիալիստական աշխատանքային կարգապահության ամրապնդման, հիմնարկություններից և ձեռնարկություններից բանվորների և ծառայողների ինքնակամ հեռացումների և պրոգուլների լիկվիդացիայի համար մղվող պայքարի նշանաբանի տակ։ (ՀԱՄԿԽ-ի Նախագահության որոշումից)։*

*Ելնելով վերոհիշյալից ՏՄԴ-ի Նախագահությունը որոշում է՝*

*1. Հաստատել ընտրությունների անցկացման օրացուցային պլանն ըստ շրջանների։*

*2. Հաշվետվությունների ու ընտրությունների ընթացքում շրջկոմներին օգնելու նպատակով պրոֆ. լավագույն ակտիվից առանձնացնել և շրջկոմներին ամրացնել 50 հոգի, պատասխանատու դարձնելով նրանց ընտրությունների հաջող կազմակերպմանը և անցկացմանը։*

*3. Պարտավորեցնել բոլոր շրջկոմներին, կենտկոմի օրացուցային պլանի համաձայն, մշակել շրջանի կոլեկտիվների հաշվետ-*

վություններն ու ընտրություններն անցկացնելու օրացուցային պլան, յուրաքանչյուր կոլեկտիվին ամրացնելով շրջանի պրոֆ. լավագույն ակտիվից առանձին ընկերների:

4. Պարտավորեցնել շրջկոմներին և կոլեկտիվներին ամրացված ընկերներին, տեղկոմների նախագահներին և պրոֆխմբորգներին, մինչև հոկտեմբերի 20-ը լայնորեն մասսայականացնել մեր պարտիայի օրգան «Պրավդա»-ի հոկտեմբերի 9-ի՝ «Պրոֆմիութենական օրգանների հաշվետվությունները և ընտրությունները» խորագրով առաջնորդող հոդվածը (տպված է «Սովետական Հայաստան» և «Կոմունիստ» թերթերի 1940 թ. հոկտեմբերի 11-ի համարներում), քննության առնել միության մեջ ընդունվելու համար տրված դիմումները, 100 տոկոսով ապահովել անդամավճարների գանձումը և լայնորեն մասսայականացնել Կենտկոմի Նախագահության սույն որոշումը:

5. Պարտավորեցնել շրջկոմների և տեղկոմների բոլոր նախագահներին և կցված ընկերներին, հոկտեմբերի 20-ից վերստուգիչ հանձնաժողովների միջոցով ստուգման ենթարկել բոլոր տեղական կոմիտեների ֆինանսական գործունեությունը: Բոլոր տեղական կոմիտեներն ու պրոֆկազմակերպիչները պետք է մինչև հոկտեմբերի 30-ը հաշվետվությունները կազմեն գրավոր ձևով, որտեղ արտացոլվի տեղական կոմիտեների ու պրոֆկազմակերպիչների ողջ գործունեությունը փաստերով, թվական տվյալներով և կոնկրետ օրինակներով:

6. Պարտավորեցնել շրջկոմների նախագահներին, կցված ընկերներին, տեղկոմի նախագահներին և պրոֆկազմակերպիչներին՝ յուրաքանչյուր միության անդամին 10 օր առաջ իրազեկ դարձնել ժողովի օրվա, ժամի և ժողովի կայանալիք վայրի մասին, աչքի ընկնող տեղերում այդ մասին փակցնելով հայտարարություններ: Պետք է նախօրոք ապահովել ժողովի վայրը անհրաժեշտ հարմարություններով (քվեարկության արկղ, նստարաններ, լույս, ջուր, վառելիք և այլն):

7. Առաջարկել պրոֆմիութենական օրգաններին, տեղկոմներին և պրոֆկազմակերպիչներին, հաշվետու-ընտրական ժողովներն անցկացնելու ոչ աշխատանքային ժամերին:

8. Առաջարկել պրոֆմիութենական մամուլի օրգաններին, պատի թերթերի խմբկոլներին, լայնորեն լուսաբանել տեղական կոմիտեների ու կազմակերպիչների հաշվետվություններն ու կատարած աշխատան[illegible]



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
42707.12
24617

9. Պարտավորեցնել շրջկոմների նախագահներին, կցված ընկերներին, տեղկոմների նախագահներին և պրոֆկազմակերպիչներին, պրոֆօրգանների ընտրություններն ավարտելուց անմիջապես հետո, լրացնել և շրջկոմի միջոցով Կենտկոմ ուղարկել հաշվետվությունների ու ընտրությունների վերաբերյալ օպերատիվ հաշվետվության ձևերը, ինչպես նաև ինֆորմացիա՝ ընտրությունների ընթացքի մասին:

10. Պարտավորեցնել բոլոր շրջկոմներին, մինչև հոկտեմբերի 25-ը շրջաններում հրավիրել պրոֆակտիվի—տեղկոմների նախագահների, պրոֆկազմակերպիչների և կցված ընկերների լայն խորհրդակցություն, պարզաբանելով ՀԱՄԿԽ-ի Նախագահության՝ «Ֆաբրիկա-գործարանային և տեղական կոմիտեների հաշվետվությունների ու ընտրությունների մասին» որոշումը, Կենտկոմի սույն որոշումը, «Պրոֆմիութենական օրգանների ընտրությունների անցկացման մասին» հրահանգը և ՏՄԴ-ի շրջկոմի տվյալ շրջանի ընտրություններն անցկացնելու կարգի մասին օրացուցային պլանը:

11. Հաստատել պրոֆօրգանների ընտրությունների հետևյալ կարգը.

ա) Այն դպրոցներում, որտեղ միության անդամների թիվը 3-ից պակաս է (մեկ կամ երկու հոգի է) այդպիսիք ամրացնել մոտակա տեղկոմին կամ պրոֆկազմակերպչին: Իսկ 3-ից մինչև 12 հոգի եղած դեպքում ընտրել պրոֆկազմակերպիչներ:

բ) Այն կոլեկտիվներում, որտեղ կան 12 և ավելի միության անդամներ, այնտեղ ընտրել տեղական կոմիտեներ:

գ) Այն կոլեկտիվներում, որտեղ կան 12-ից մինչև 25 միության անդամներ, տեղկոմների և արհկոմների կազմը ընտրել 3 հոգուց, 25-ից մինչև 50 միության անդամների դեպքում՝ 5 հոգուց, 50—300 լինելու դեպքում՝ 7 հոգուց, իսկ 300-ից բարձր՝ մինչև 11 հոգուց:

դ) Վերստուգիչ հանձնաժողովներ ընտրել բոլոր տեղական կոմիտեներին և արհկոմներին կից՝ 3-ից մինչև 5 հոգու կազմով:

12. Առաջարկել պրոֆ. Կենտկոմի բաժինների վարիչներին, մինչև հոկտեմբերի 20-ը շրջկոմ-տեղկոմներն ապահովել նրանց կից կազմակերպվելիք հանձնաժողովների վերաբերյալ համապատասխան հրահանգներով:

13. Պարտավորեցնել պրոֆմիութենական օրգաններին՝ հաշվետու ընտրական ժողովներում առաջ քաշել բոլշևիկյան լայն

ինքնաքննադատությունն ու քննադատությունը, ի հայտ բերել պրոֆմիութենական օրգանների աշխատանքում եղած բացերն ու թերությունները և միջոցներ նշել դրանց վերացման համար։ Տեղական կոմիտեների ու պրոֆկազմակերպիչների կազմի մեջ անշեղորեն առաջ քաշել Լենինի-Ստալինի գործին մինչև վերջը նվիրված մարդկանց, որոնք ընդունակ են ՀԱՄԿԽ-ի 10-րդ պլենումի պատմական որոշումների հիման վրա արագորեն վերացնելու պրոֆմիութենական ապարատում եղած թերությունները և բարելավելու պրոֆմիութենական օրգանների աշխատանքը։

ՏՄԴ-ի Արհմիությանն Կենտկոմի նախագահ՝ Հ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

---

# Հ Ր Ա Հ Ա Ն Գ

## ՊՐՈՖՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Պրոֆմիութենական օրգանների ընտրությունների ժամանակ ցուցակով քվեարկելը արգելվում է։ Քվեարկությունը պետք է կատարվի ըստ առանձին թեկնածությունների, ընդ որում պրոֆմիության բոլոր անդամների համար անսահմանափակ իրավունք է ապահովվում թեկնածուներին բացարկելու և նրանց քննադատելու։ Ընտրությունները կատարվում են թեկնածուների փակ (գաղտնի) քվեարկության միջոցով։

2. Փակ (գաղտնի) քվեարկությամբ ընտրվում են՝

ա) ֆաբրիկա-գործարանային և տեղական կոմիտեները, ցեխային կոմիտեները, պրոֆմիութենական գրուպաների կազմակերպիչները (պրոֆգրուպկազմակերպիչները).

բ) պրոֆմիությունների շրջանային, քաղաքային, մարզային, երկրային և ռեսպուբլիկական կոնֆերանսների և համագումարի դելեգատները.

գ) պրոֆմիությունների շրջանային, քաղաքային, մարզային, երկրային, ռեսպուբլիկական և կենտրոնական կոմիտեները.

դ) պրոֆմիութենական օրգանների վերստուգիչ հանձնաժողովները։

3. Համապատասխան կոմիտեների պլենումներում բաց քվեարկությամբ ընտրվում են՝

ա) ֆաբրիկա-գործարանային և տեղական կոմիտեների նա-



խագահներն ու նախագահների տեղակալները և ցեխային կոմիտեների նախագահները.

բ) պրոֆեսիոնալ միությունների շրջանային, քաղաքային, մարզային, երկրային, ռեսպուբլիկական և կենտրոնական կոմիտեների նախագահներն ու քարտուղարները.

գ) պրոֆմիությունների շրջանային, քաղաքային, մարզային, երկրային, ռեսպուբլիկական և կենտրոնական կոմիտեների նախագահության անդամները.

դ) պրոֆեսիոնալ միությունների ռեսպուբլիկական և կենտրոնական կոմիտեների նախագահությունները.

ե) վերստուգիչ հանձնաժողովի նիստերում վերստուգիչ հանձնաժողովների նախագահները։

4. Պրոֆմիութենական մարմինների ընտրությունները ձեռնարկություններում, հիմնարկություններում, ուսումնական հիմնարկներում անց են կացվում հետևյալ կարգով՝ նախ ընտրվում են ֆաբրիկա-գործարանային և տեղական կոմիտեները, վերստուգիչ հանձնաժողովները, ապա՝ ցեխային կոմիտեներն ու պրոֆգրուպկազմակերպիչները։

5. Ֆաբրիկա-գործարանային և տեղական կոմիտեները հաշվետու վերընտրական ժողովից ոչ ուշ քան տաս օր առաջ պրոֆմիության անդամներին իրազեկ են դարձնում ֆաբրիկա-գործարանային տեղական կոմիտեի ընտրությունն անցկացնելու օրվա և կարգի մասին։

Հաշվետու վերընտրական ժողովը բացում է համապատասխան պրոֆմարմնի ներկայացուցիչը, այսինքն ձեռնարկության կամ հիմնարկության պրոֆմիության անդամների ընդհանուր ժողովը բաց է անում ֆաբրիկա-գործարանային կամ տեղական կոմիտեի ներկայացուցիչը, ցեխի պրոֆմիության անդամների ժողովը՝ ցեխային կոմիտեի ներկայացուցիչը. պրոֆխմբակի ժողովը՝ պրոֆխմբակի կազմակերպիչը։

Հաշվետու ընտրական ժողովը ղեկավարելու համար բաց քվեարկությամբ ընտրում է նախագահություն։ Նախագահության անդամների թիվը սահմանում է ինքը՝ ժողովը։ Նախագահության կազմի թեկնածուներն առաջադրվում են անմիջապես ժողովի կողմից։

6. Ֆաբրիկա-գործարանային և տեղական կոմիտեների հաշվետվություններն ու ընտրությունները կատարվում են ձեռնարկությունների, հաստատությունների և ուսումնական հիմնարկությունների պրոֆմիությունների ընդհանուր ժողովներում։

Այն դեպքերում, երբ արտադրության պայմաններից ելնելով (արտադրության անընդհատություն, բազմահերթափոխություն) անհնար է հրավիրել պրոֆմիության անդամների ընդհանուր ժողով, թույլատրվում է յուրաքանչյուր առանձին դեպքում, պրոֆմիության համապատասխան կենտրոնական կոմիտեի թույլտվությամբ ընդհանուր գործարանային կոմիտեի հաշվետվություններն ու ընտրությունները կատարել հերթային կամ ցեխային ժողովներում։

7. Ցեխային կոմիտեների հաշվետվություններն ու ընտրությունները կատարվում են ցեխի պրոֆմիության անդամների ժողովներում։ Այն դեպքերում, երբ արտադրության պայմաններից ելնելով հնարավոր չէ հրավիրել ցեխի պրոֆմիության անդամների ընդհանուր ժողով, ֆաբրիկա-գործարանային և տեղական կոմիտեի թույլտվությամբ կարելի է հրավիրել պրոֆմիության անդամների ժողովներ ըստ հերթափոխի։

8. Խմբակային պրոֆկազմակերպիչների հաշվետվություններն ու ընտրությունները կատարվում են պրոֆխմբակների ժողովներում։

9. Ֆաբրիկա-գործարանային և տեղական կոմիտեների հաշվետվություններն ու ընտրությունները կատարվում են ոչ աշխատանքային ժամանակ և ըստ հերթափոխների ու աշխատանքում զբաղվածներին մյուս հերթերում աշխատողների հաշվին փոխարինել չի թույլատրվում։

10. Պրոֆմիության անդամների հաշվետու-ընտրական ժողովներն իրավազոր են համարվում այն դեպքում, երբ այդ ժողովներին ներկա են լինում ընտրությունների ժամանակ ձեռնարկության կամ հիմնարկության մեջ աշխատող պրոֆմիության անդամների առկա կազմի առնվազն 2|3-ը, այսինքն բացի հիվանդներն և նրանք, որոնք գտնվում են հերթական արձակուրդում, գործուղման մեջ և այլն։

11. Պրոֆմիութենական օրգանների և վերստուգիչ հանձնաժողովների ընտրությունները կատարվում են այն ժամանակ, երբ ժողովը, կոնֆերանսը, համագումարը լսում, քննարկում և որոշում է ընդունում համապատասխան պրոֆօրգանի և վերստուգիչ հանձնաժողովի զեկուցման առթիվ։

Պրոֆմիութենական օրգանների հաշվետվությունները նախապես քննարկվում են պրոֆմիության համապատասխան կոմիտեների ժողովներում։ Հաշվետու զեկուցումների նախնական քննարկումը պրոֆմիությունների կոմիտեների նիստերում չի զրկում այդ պրոֆմիությունների օրգանների անդամներին՝ պրոֆմիության ժողովներում, կոնֆերանսներում, համագումարներում հանդես գալու և քննադատելու պրոֆկազմակերպության ղեկավարությանը։

12. Ընտրություններն անցկացնելուց առաջ ընդհանուր ժողովը, կոնֆերանսը կամ համագումարը սահմանում է միության համապատասխան կոմիտեի, վերստուգիչ հանձնաժողովի նոր կազմի անդամների քանակը։

13. Պրոֆմիութենական օրգանի նոր կազմի թեկնածուները առաջադրվում են պրոֆմիության անդամների ժողովում, կոնֆերանսում, համագումարում։

Պրոֆմիության յուրաքանչյուր անդամին, որն ուզում է պրոֆօրգանի կազմի մեջ առաջադրել այս կամ այն թեկնածությունը, ժողովի նախագահությունը խոսք է տալիս՝ թեկնածության մասին առաջարկություն մտցնելու և այդ առաջարկությունը հիմնավորելու համար։

Եթե առաջարկություն է ստացվում դադարեցնել պրոֆմիութենական համապատասխան օրգանի համար թեկնածուների առաջադրումը, ժողովի նախագահությունն այդ առաջարկությունը դնում է ընդհանուր ժողովի, կոնֆերանսի կամ համագումարի լուծմանը և բաց քվեարկությամբ լուծվում է այն հարցը՝ շարունակել թե դադարեցնել ընտրվող պրոֆմիութենական օրգանի նոր թեկնածուների գրանցումը։

14. Այն պրոֆկազմակերպություններում, որտեղ ֆաբրիկա-գործարանային կոմիտեի հաշվետվությունն ու ընտրությունը կատարվում է հերթափոխային կամ ցեխային ժողովներում, ֆաբրիկա-գործարանային կոմիտեի հաշվետվությունը քննարկելուց և հաշվետվության առթիվ որոշումն ընդունելուց հետո, ցեխային կամ հերթափոխային ժողովներում բաց քվեարկությամբ ընտրվում են վստահված անձեր հետևյալ նորմայով—պրոֆմիության 25—50 անդամին մեկ վստահված անձ։

Վստահված անձերի խորհրդակցությունը նախապես նշում է ֆաբրիկա-գործարանային կոմիտեի կազմի թեկնածուներին։ Վստահված անձերի խորհրդակցությունը հրավիրում է ֆաբրիկա-գործարանային կոմիտեն։

Վստահված անձերի խորհրդակցության կողմից նշված թեկնածությունները առաջ են քաշվում վստահվածների խորհրդակ-

ցության անունից և անհատապես, ընդհանուր կարգով քննարկվում են այդ ժողովներում։

Վստահվածների խորհրդակցության կողմից ֆաբրիկա-գործարանային կոմիտեի նոր կազմի թեկնածությունների նախնական նշումը չի սահմանափակում պրոֆմիության անդամների իրավունքը ժողովի ժամանակ թեկնածություններ նշելու և քննարկելու ժամանակ։

Ցեխային կամ հերթափոխային որևէ ժողովում առաջադրված այն թեկնածությունները, որոնք չեն առաջադրվել վստահվածների խորհրդակցության կողմից, պետք է քննարկվեն հետագա հերթափոխային, ցեխային բոլոր ժողովներում և գաղտնի քվեարկության ենթակա ցուցակների մեջ մտցվում են միայն այն թեկնածությունները, որոնց հանձնարարել է ձեռնարկության մեջ աշխատող պրոֆմիության անդամների առնվազն կեսը։

15. Շրջանային, մարզային և ռեսպուբլիկական կոնֆերենցիաներում և պրոֆմիությունների համագումարներում, կոնֆերանսի կամ համագումարի նախագահության որոշմամբ, կարելի է հրավիրել դելեգացիաների ներկայացուցիչների խորհրդակցություններ՝ նախապես պրոֆմիութենական օրգանի նոր կազմի թեկնածուներ նշելու համար։

Դելեգացիաների ներկայացուցիչների խորհրդակցության կողմից նշված թեկնածությունները առաջադրվում են կոնֆերանսի, համագումարի նիստում, այդ խորհրդակցության անունից և անհատապես, ընդհանուր կարգով, քննարկվում են կոնֆերանսի, համագումարի նիստերում։

Դելեգացիաների ներկայացուցիչների խորհրդակցության ժամանակ պրոֆմիութենական օրգանի նոր կազմի մեջ նախապես թեկնածություններ նշելը չի սահմանափակում դելեգատների իրավունքները բուն կոնֆերենցիայում, համագումարում թեկնածություններ նշելու և քննարկելու ժամանակ։

16. Պրոֆմիութենական օրգանի կազմի մեջ առաջադրված բոլոր թեկնածությունների քննարկումը կատարվում է այն կարգով, ինչպես նրանք ստացվել և գրի են առնվել ժողովի, կոնֆերանսի, համագումարի նախագահության կողմից։

Թեկնածություններն անհատապես քննարկելու ժամանակ պետք է ապահովվի պրոֆմիութենական օրգանի կազմի համար առաջադրված թեկնածությունների դեմ բացարկ հայտնելու անսահմանափակ իրավունք, այսինքն, ժողովի յուրաքանչյուր



մասնակից կարող է բացարկել առաջադրված ամեն մի թեկնածուի և առաջադրված յուրաքանչյուր թեկնածության առթիվ կարող են արտահայտվել պրոֆմիության անսահմանափակ թվով անդամներ ինչպես «թեր» այնպես էլ «դեմ»։

Եթե առաջարկություն է ստացվում այս կամ այն թեկնածության քննարկումը դադարեցնել, նախագահությունն այդ առաջարկությունը դնում է ընդհանուր ժողովի, կոնֆերանսի, համագումարի լուծմանը և բաց քվեարկությամբ որոշում է տվյալ թեկնածության քննարկումը դադարեցնելու կամ շարունակելու հարցը։

17. Բացարկված թեկնածությունները քննարկելուց հետո յուրաքանչյուր առանձին դեպքում անհրաժեշտ է բաց քվեարկության կարգով լուծել այն հարցը, թե պետք է արդյոք տվյալ թեկնածությունը մտցնել այն ցուցակի մեջ, որ կազմվում է փակ (գաղտնի) քվեարկության միջոցով պրոֆմիութենական օրգանի ընտրությունը անցկացնելու համար։ Այս դեպքում պետք է հաշվել այն բոլոր ձայները, որոնք տրվել են ինչպես «բացարկին թեր» այնպես էլ «բացարկին դեմ»։

Իսկ այն թեկնածությունները, որոնց դեմ բացարկ չի ստացվել, բաց քվեարկություն չի կատարվում և այդ թեկնածությունները մտցվում են ցուցակի մեջ փակ (գաղտնի) քվեարկության համար։ Ժողովում, կոնֆերենցիայում, համագումարում թեկնածությունները քվեարկելուց հետո փակ (գաղտնի) քվեարկության ներկայացվող ցուցակների ճշտության համար պատասխանատու է ժողովի նախագահությունը։ Նախագահությունը պարտավոր է ուշի ուշով ստուգել կազմված ցուցակում կատարված գրանցումների ճշտությունը։

18. Փակ (գաղտնի) քվեարկությունն անցկացնելուց առաջ պրոֆմիության անդամների ընդհանուր ժողովը, կոնֆերանսը, համագումարը բաց քվեարկությամբ ընտրում է հաշվիչ հանձնաժողով փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներն ամփոփելու համար։

Հաշվիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանում է ընդհանուր ժողովը, կոնֆերանսը, համագումարը։ Հաշվիչ հանձնաժողովի անդամներն ընտրում են հաշվիչ հանձնաժողովի նախագահ։

Այն ձեռնարկություններում և հիմնարկություններում, որտեղ ֆաբրիկա-գործարանային և տեղական կոմիտեների ըն-

տրրությունները կատարվում են ցեխային և հերթափոխային ժողովներում, համագործարանային հաշվի չհանձնաժողովը կազմվում է պրոֆմիության անդամների ցեխային, հերթափոխային ժողովներում, հաշվիչ հանձնաժողովի մեջ ընտրված ներկայացուցիչներից։ Այսպիսի դեպքերում հաշվիչ հանձնաժողովի անդամների ընդհանուր քանակը և ցեխից կամ հերթափոխությունից այդ հանձնաժողովում ներկայացուցիչ ընտրվածների քանակը սահմանում է վստահվածների խորհրդակցությունը։

Քվեարկությունից առաջ հաշվիչ հանձնաժողովի նախագահը (իսկ այն ձեռնարկություններում, որտեղ ընտրությունները կատարվում են ցեխային-հերթափոխային ժողովներում, հաշվիչ հանձնաժողովի անդամը) պարտավոր է բացատրել պրոֆմիության անդամների ժողովին, կոնֆերենցիայի, համագումարի դելեգատներին փակ (գաղտնի) քվեարկություն անցկացնելու կարգը։

Հաշվիչ հանձնաժողովը փակ (գաղտնի) քվեարկությունից առաջ պարտավոր է նախապատրաստել քվեատուփերը և անձամբ այդ քվեատուփերը կնքել կամ փակել։

19. Հաշվիչ հանձնաժողովը ընտրական ժողովի, կոնֆերանսի, համագումարի յուրաքանչյուր մասնակցին պրոֆմիության անդամատոմս կամ դելեգատական մանդատ ներկայացնելուց հետո տալիս է մի-մի օրինակ այն թեկնածությունների ցուցակից, որոնք նշվել են պրոֆմիութենական օրգանների նոր կազմի մեջ անցկացնելու համար և ժողովի, կոնֆերանսի, համագումարի մասնակիցների ցուցակում կամ մանդատներում նշում է, թե պրոֆմիության անդամը, դելեգատը մասնակցել է քվեարկությանը։

20. Փակ (գաղտնի) քվեարկությանը մասնակցում են միայն պրոֆմիության անդամները։

Պրոֆմիության յուրաքանչյուր անդամ փակ (գաղտնի) քվեարկության ժամանակ իրավունք ունի առանձին թեկնածություններ ջնջել և ավելացնել նոր թեկնածություններ պրոֆմիութենական օրգանների կազմի մեջ անկախ այն բանից, թե ժողովը, կոնֆերանսը, համագումարը ինչ թիվ է սահմանել պրոֆմիութենական օրգանի նոր կազմ ընտրելու համար։

21. Քվեարկությունից հետո հաշվիչ հանձնաժողովը բաց է անում քվեատուփը և այդ նպատակով հատկացված շենքում ամփոփում է քվեարկության արդյունքները։



Հաշվիչ հանձնաժողովը պարտավոր է հաշվել յուրաքանչյուր թեկնածության համար առանձին «թեր» և «դեմ» տրված քվեները։

Ձայները հաշվելուց հետո հաշվիչ հանձնաժողովը կազմում է արձանագրություն, որի մեջ մտցնում է քվեարկության արդյունքները ամեն մի թեկնածության առթիվ առանձին և հանձնաժողովի բոլոր անդամները ստորագրում են այդ արձանագրությունը։

Այն շենքում, որտեղ հանրագումարի են բերվում քվեարկության արդյունքները, ոչ ոք իրավունք չունի գտնվելու, բացի հաշվիչ հանձնաժողովի անդամներից։

22. Հաշվիչ հանձնաժողովը ընտրական ժողովին, կոնֆերանսին, համագումարին զեկուցում է քվեարկության արդյունքների մասին յուրաքանչյուր թեկնածուի մասին առանձին-առանձին։

Պրոֆօրգանի կազմում ընտրված են համարվում այն թեկնածուները, որոնք քվեարկվող մնացած թեկնածուների համեմատությամբ ստացել են ձայների մեծամասնություն և ժողովում, կոնֆերանսում, համագումարում ներկա եղող պրոֆմիության անդամների, կոնֆերանսի, համագումարի դելեգատների ձայների կեսից ոչ պակաս։

23. Փակ (գաղտնի) քվեարկության ամբողջ նյութը (թեկնածուների ցուցակները, գրավոր դիմումները, քվեարկության արդյունքների ամփոփում և այլն) պետք է պահվի գաղտնի փաստաթղթերի իրավունքով համապատասխան պրոֆօրգաններում։

Ընտրական բյուլլետենները պահվում են.

ա) պրոֆգրուպկազմակերպիչների, ցեխկոմների, ֆաբրիկագործարանային և տեղական կոմիտեների ընտրության վերաբերյալ՝ երեք ամիս։

բ) շրջկոմների, մարզկոմների, երկրկոմների, ռեսպուբլիկական կոմիտեների ընտրության վերաբերյալ՝ 4 ամիս։

Մատնանշված ժամկետներն անցնելուց հետո ընտրական բյուլլետենները պետք է ոչնչացնել, որի մասին կազմվում է 3 օրինակից բաղկացած արձանագրություն պրոֆմիութենական համապատասխան օրգանի և վերստուգիչ հանձնաժողովի անդամի ստորագրությամբ։ Ակտերը պիտի պահվեն պրոֆմիութենական համապատասխան օրգաններում գաղտնի փաստաթղթերի իրավունքով։

Հանձնված է արտ. 19[illegible] [illegible], ստորագրված է տպագր. 1940 թ. հոկտեմբերի 21-ին, ՎՖ 843 [illegible] 251, տիրաժ 1300

Լուսհրատի տպարան, [illegible] Տերյան 127

ՀՀ Ազգային գրադարան
NL0197567

32

38143

491
8112